

ՍԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՅՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑՔ

ԵՒ

ՆՐԱ ԶԱՐԳԵՑՄԱՆ ԾՐՁԱՆՆԵՐԸ

(Շարունակութիւնը:)

§ 19. Սորոնդունեանց մէխոն-նէտան հա-
տուածը, որ բայսի բուռն է կլիստ հայերէն հըստո-
րէն-նէտան վերջուա, անյայտ մէխոն-նէտան ուլիմիտուու-նէտան է
Ուլիմիտուու-կլիստ դպրոցից: — Կլիմածնի մա-
տենադարանի թիւ 1939 ձեռագրում (= կա-
րին. 8ուցակ, թ. 1897), բացի կլիմասին վերա-
գրուած Ստորոգութեանց մեկնութիւնից, գըտն-
ուում է նաեւ, ինչպէս վերեւ յիշեցինք, համա-
ռօտ մի հատուած Արխտոտելի Ստորոգութեանց
մի այլ մեկնութեան, որը տպագրուած է կլիմասի
հայ հրատարակութեան վերջուում, էջ 140—
149:

Այս հատուածը, որ չունի վերնագիր եւ
որեւէ տեղեկութիւն կամ ակնարկ՝ չեղինակի
մասին, խիստ նման է իր բովանդակութեամբ,
իսկ տեղ տեղ գրեթէ բառացի համապատաս-
խան է կլիմասի եւ դաւամի մեկնութիւններին:

Նման տեղերն այնքան շատ են, որ աւե-
լորդ եմ համարում դէմ առ դէմ զնել նրանց
բնագիրը, այլ նշանակում եմ միայն համապա-
տասխան հատուածների էջերն ու տողերը.

1. Անանուն մեկնիչ, էջ 140, 15—22 =
Էլ. 2, 13—3, 8: 2. Ան. 141, 1—9 = Էլ.
3, 9 են: 3. Ան. 141, 9—26 = Էլ. 6, 17—
8, 8: 4. Ան. 141, 30—142, 3 = Էլ. 3, 19—
21: 5. Ան. 142, 4—8 = Էլ. 4, 19—25: 6.
Ան. 142, 8—14 = Էլ. 9, 14—18: 7. Ան. 142,
27—143, 4 = Դաւ. 164, 5—12: 8. Ան.
143, 12—18 = Էլ. 8, 16—19: 9. Ան. 144, 11—
145, 10 = Էլ. 4, 25—5, 18: 10. Ան.
145, 20—147, 1 = Էլ. 9, 14—10 15: 11.
Ան. 147, 11—17 = Էլ. 30, 11—17: 12. Ան.
148, 8—149, 5 = Էլ. 37, 11—38, 20 եւ
Դաւ. 252, 14—253, 23:

Այս համեմատութիւնը պարզ ցցց է տա-
լիս, որ Ստորոգութեանց մեկնութեան սոյն հա-
տուածի մեկնիչը պատկանում է նշյապէս Ոլիմ-
պիոդորոս-կլիմասի դպրոցին: Սակայն նոյն այս
հատուածի մէջ հանդիպում են քաղուածքներ

անյայտ ինչ որ աղբիւրներից եւ յիշատակւում
են մատենագիրների եւ փիլիսոփաների անուն-
ներ, ինչպէս Պատիլ, Փղւոս, Ազնտէս, Օրոնք չեն
յիշւում դաւամի ու կլիմասի մեկնութիւններում:

Ուշագրութեան արժանի է, որ Սահմանք
իմաստասիրութեան երկում կալիմաքոսից բե-
րուած յայտնի քաղուածքն Անանուն մեկնիչը
վերագրում է ոմն Պատիլին¹:

Փղւոսին Անանուն մեկնիչը յիշատակում
է իդոնիկեան իմաստասէրների՝ Եպիկուրոսի,
Արիստիպտոսի եւ Կղէոմպառտոսի՝ խմբում, եւ
նրա իդոնիկեան լինելու ապացոյց համարում է
“Փղւոս” անունը: “Եւ վասն զի Փղւոս իդոնի-
կեան էր, ասում է նա, յայտնէ անունն, զի
ցանկութիւն ասի. ուստի եւ Փղւոս անուաննեմք
զտարփաւալուն, (էջ 143):

Անանուն մեկնիչը յիշում է եւ ոմն Ազն-
տէսին, նոյնպէս անյայտ մի անուն, որի մասին
նա հազորգում է հետեւեալը. Երրորդ ձեռ-
նարկութիւնն՝ զոր Ազնտէսն ասէ, թէ մինչ
աստուածայինն ունի զանհոգ կեալն՝ առաւել
մեղ պարտ է անհոգաբար կեալ: Այլ ոչ զայդ
ասէ Ազնտէս, այլ եթէ աստուածայինն՝ զոր ինչ
եւ կամ՝ անխափանաբար եւ կատարէ, իսկ մար-
դիկ ոչ զամենայն՝ զոր ինչ եւ կամին՝ կատարել
կարեն,” (էջ 143):

Թէ ինչ աղբիւրներից է քաղել Անանուն
մեկնիչը Պատիլի, Փղւոսի եւ Ազնտէսի վերա-
բերեալ իր վերօյիշեալ տեղեկութիւնները՝ այդ
կարօտ է առանձին քննութեան Արխտոտելիս
իմաստասիրութեան յունական ձեռագիրների
օգնութեամբ:

Բացի վերօյիշեալ մի քանի անծանօթ
հատուածներից, Անանունի մեկնութիւնը իմաս-
տասիրական իր գաղափարներով եւ մեկնական
յատուկ իր եղանակով այնքան է նման Ոլիմ-
պիոդորոս-կլիմասի ու դաւամի մեկնութիւններին,
որ սրա խմբակցութիւնն այդ մեկնութիւնների
հետ կարելի է համարել, իմ կարծիքով, միան-
գամայն աներկբայելի:

§ 20. Անանունի Սորոնդունեանց մէխոն-նէտան
հատուածը դաստիք աշխատութեան վէ: — 1. Նկատի
առնելով, որ նորպատռնական դաւամիթ մեկնիչը
Ստորոգութեանց մեկնութիւնը կորած է համար-
ուում, կարելի էր ենթագրել, որ յիշեալ հատ-
ուածն այդ աշխատութեան հայերէն թարգմա-
նութեան մի կտորն է: Այդպիսի ենթագրու-
թեան հիմք կարող են ծառայել, թէ այդ հատ-

¹ Տես էջ 143 եւ Դաւ. Սահմ., էջ 164:

ուածի Ոլիմպիոդորոս-Էլիասի խմբին պատկանելը եւ թէ նրա բովանդակութեան մերձաւորութիւնը դաւթի մեկնութիւնների հետ:

Սակայն դաւթի երկերի եւ սոյն հատուածի ուշադիր քննութեամբ ստացւում է հակառակ եզրակացութիւն:

Նորպահատոնական դաւթը եւ հատուածի Անանուն հեղինակը որոշ խնդիրներում այնքան են տարբերում իրարից, որ այդ հատուածը դաւթին վերագրելը թւում է անհաւանական ու անընդունելի:

Այդ անհաշտելի տարած այնութիւնները պարզ երեւում են հետեւեալ համեմատութիւններից.

1. Դաւթիթն իր Սահմանք իմաստասիրութեան երկում “Ուրախացիր ով արեգակն, Կղէոմբուտոս Ամրուակեացի վազեալ ի բարձրաբերձ պարսպացի դժոխս, եւն խօսքերը (Սահմ., 164) վերագրում է Կալիմաքոսին, իսկ Անանուն մեկնիչը ոմն Պատիլին (էջ 143):

2. Դաւթիթը Ճեմականների անուան ծագման մասին ասում է. “Իսկ Ճեմական կոչեցաւ Արիստոտէլ, վասն զի Պղատոնի տակաւին եւս կենդանի գոլով՝ ոչ իշխէր նստել եւ ուսուցանել, (Պորփ. Ներած. Վերլուծ., էջ 281), իսկ Անանուն մեկնիչը, նման Էլիասին, կարծում է, թէ “Կոչին Արիստոտելեանք Պեռիպատակեանք, վասն զի Ճեմելով առնէր զգբուցատրութիւնն ըստ նմանութեան Պղատոնի, զի նա Ճեմելով զգբուցատրութիւնն առնէր, խորհելով՝ մի միայն զհոգին վարժել, այլ եւ զմարմինն, (էջ 145):

3. Դաւթիթը “Խորթ շարագրածութեանց ու խնդիրը լուսաբանում է Պորփիւրի Ներածութեան վերլուծութեան առաջին պրակում, իսկ Անանուն մեկնիչը, նման Էլիասին, Ստորոգութեանց մեկնութեան առաջարանում (Մես Պորփ., Ներած. Վերլ., էջ 252, էլ. եւ Ան., էջ 37. 148):

“Խորթ շարագրածութեանց, վերաբերեալ այս հատուածների բովանդակութեան համեմատութիւնից եւս երեւում է, որ Անանունը եւ դաւթիթը տարիքեր հեղինակներ են եւ որ Անանունի մեկնութիւնն աւելի համապատասխանում է Ոլիմպիոդորոս-Էլիասի մեկնութեանը, քան Դաւթի:

Տ 21. Անանունը + բիստոնեայ մենին է, ոգետ ու ներսուականական հարցերում: — Մեկնելով կիւնիկեան գպրոցի անուան ծագումը՝ Անանուն մեկնիչը տարիս է, ի միջի այլոց եւ հետեւեալ լուսաբանութիւնը: “Դարձեալ՝ կիւնի-

կեցիք ասացան, զի պաշտէին զշունս՝ որպէս ի Հելլենացւոց անշունչ զրաւշեալքն պաշտէին, (էջ 141): Այս բացարութիւնը պարզ ցոյց է տալիս, որ ինը մեկնիչը հելլենացի չէր եւ ոչ էլ հեթանոս, որի մեջ հաւանական է ենթագրել, որ նա եւս, ինչպէս եւ Դաւթիթն ու Էլիասը, պատկանում էր Արիստոտէլի իմաստասիրութեան քրիստոնեայ մեկնիչների շարքին:

Հետաքրիթը մի ակնարկ եւս կայ Անանունի մեկնութեան հատուածում, որից թերեւս կարելի լինի հետեւցնել, որ Անանուն մեկնիչը եղել է Աթէնքում: Խօսելով իմաստասիրական հերձուածների մասին, Անանունն ասում է. “Երրորդ յեղանակի ի տեղեացն, որպէս կոչեցան ակատեմացիք եւ ստոյիկեանք, եւ գեղեցիկ է այս տեղի Աթենացեացնց, (էջ 147): Այս խօսքերը կարող են մի նշան համարուել, որ Անանուն մեկնիչը Աթէնք այցելած մի օտարական է, որի վրայ ստոյիկեանների գեղեցիկ սրահը թողել է խօր տպաւորութիւն:

Միւս կողմից, նաեւ պարզ նկատւում է Անանունի մեկնութեան բովանդակութիւնից, որ նա բաւարար չափով չէ կարողացել լմբոնել իմաստասիրական գիտութիւնը եւ երբեմ, աններելի կերպով, շփոթում ու խեղաթիրում է իմաստասիրական ամենատարրական փաստերն ու գաղափարները:

Անանուն մեկնիչի տգիտութեանը պէտք է վերագրել նրա հետեւեալ վկայութիւնները Երակղիտոսի, Եփեկտիկեանների եւ Պտղոմէսի մասին:

Անանուն (Էլիասի հաստ.), Էլիաս, էջ 2, 17—19:
էջ 140, 7—10:

“Եւ զոր ասեմ այս է Ալան զի միս առն Երակղիտոս արտադրեաց կարծիք գրութիւն ինի եւ զամենայն ինչ անշարժ գու: ոչ հերձուած, որպէս Լաւ Եփեկտեանք հասարաւակիտեայն իթէ ամենայն կապէս մոտածեցին՝ ոչինչ ինչ շարժի. եւ կամ Պարգու անշարժ, որ եւ եռուտ մենիտեայն թէ եզ է էակն նեայք անու անին:”

Անանուն, էջ 148.

“Եղեւ գարձեալ այլ թաւ գաւորի Փիւտագեղիւս, որ բէացւոց թագաւորի հաւեւ նա փափագէր Պաղոմէի բարեցելալ զայնս, որը Պիւշարագրածացն եւ տայր թագորին զոյնին. իսկ Պաղուրացում գանձու, որ բերէին միութ զայնս, որը Արիսնմա այսպիսի գիրա:”

Ինչպէս այս համեմատութիւններից տեսնում ենք, Էլիասի Ճգրիտ վկայութիւնները չիմնովին աղջատուած են Անանունի մօտ: Հե-

բակլիտոսի “πάντα ρεῖ”, ζանրածանօթ դրու-
թիւնը, Անանուն մեկնիչի բացատրութեամք, դա-
ռել է “ամենայն ինչ անշարժ գոյլ”, իսկ “ոչինչ
գոյլ անշարժ, դրութիւնը վերագրուած է Ափեկ-
տիկեաններին։ Էլիասի տեղեկութիւնը Պաղո-
մեոսի մասին, իբր սա Հաւաքում էր Սրիստոսէլի
երկերը, Անանուն մեկնիչն անչեթեթ կերպով
խեղաթիւրել է, կարծելով, որ Փիլադելֆիոսը
ցանկացել է հաւաքել Պաղոմէի գրուածքները։

Այս կոպիտ ու անհեթեթ սխալները եւս
մինոր ապացոյց են, անշուշտ, որ Ստորոգ ութեանց
համառօտ հատուածի հեղինակը Դաւիթ փիլի-
սոփան չէ, այլ մի ուրիշ անվարժ ու կիսահմուտ
մեկնիչ :

§ 22. Նոր դիտողութեաներ Արէստութէլ մէր-
լուծականի մէկնութեան ու նոր մէշին-ին բառն: —
Դասիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանու-
թեամբ, հետազօտութեանս մէջ մէկնութիւն
չորեքտասան գլխոց Արիստոտէլի ի վերլուծա-
կանն, հատուածը վերագրել էի Դասիթին:

Աերլւծականքի մեկնութիւնը նորպղա-
տոնական դաւթի աշխատութիւն էի համարել,
գլխաւորապէս, այն պատճառով, որ այդ գրուած-
քում թէ տրամաբանական հասկացողութիւն-
ները եւ թէ դրանց մեկնութեան ու բացատրու-
թեան եղանակը նոյն են, ինչ որ դաւթի նե-
րածութեան մեկնութեան եւ Սահմանը իմաս-
տասիրութեան երկերում։ Բացի այդ՝ մատնա-
նիշ էի արել նաեւ մի քանի հատուածներ, որոնք
այդ գրուածքներում գրեթէ բառացինման են¹.

Այդ եզրակացութիւնը թւում է ինձ այժմ
կարօտ վերաբննութեան։ Դա թի մասին վերո-
յիշեալ հետազօտութիւնս գրելու ժամանակ՝ ես
գեռեւս ծանօթ չէի կլիասին վերագրուած Ստո-
րոգութեանց մեկնութեանը, ոչ էլ Անանունի
Ստորոգութեանց մեկնութեան համարակալին։

Այս վերջին մեկնութիւնների քննութիւնը
ցցց է տալիս, որ իմաստասիրական գաղափար-
ների ու մաքերի նմանութիւնն Ոլիմպիոդոր-
էլիսաի խմբին պատկանող մեկնութիւններում,
ու նոյն իսկ ամբողջ հատուածների նոյնութիւնը՝
չեն կարող, ընդհանրապէս, կոուան ու հիմք
ծառայել որոշելու նոյն մեկնութիւնների հեղի-
նակների խնդիրը:

Դրա պատճառը շատ պարզ է:

Ամմոնիսու - Ոլիմպիոդրոսի խմբին պատկա-
նել են զանազան մեկնիչներ, որոնք աշակերտելով
մէկը միւսին՝ պոհ են առել նախ եւ առաջ իրանց

ուստցիչների դասախոսութիւնները, եւ երբեմն
կցել այդ նիւթին քաղուածքներ միւս մեկնիչների
գրուածքներից։ Իմաստափրական այս մեկնու-
թիւնները ինքնուրոյն ու անհատական ստեղծա-
գործութեան արդիւնք չեն։ Կրանց մէջ, համեմա-
տաբար, քիչ կան հատուածներ ու մաքեր, որոնք
պատկանեն աշակերտ մեկնիչին և եւփական գրչին։

Ղինելով մէկը միւսի աղբիւր՝ այս մէկնու-
թիւնները պարունակում են իրանց մէջ նման
իմաստափրական սկզբունքներ եւ բազմաթիւ
նման հատուածներ, եւ սովորական այդ նմանու-
թիւնները բնաւ չեն որոշում այս կամ այն
հատուածի անմիջական աղբիւրը, այլ միայն
մատնանշում են դոցա Ամմնիոս - Ոլիմպիոդորեան
խմբին պատկանիր,

§ 23. Աւրածավանք միանելու համար
առնելու դրամի, Ամսանիութ եւ Ոլյուստուրու-
թիանք Հինութեանների մեջ: — Վերլուծականքի
մեխութեան հայերէն թարգմանութիւնը՝ թէ
իր բավանդակութեամբ եւ թէ իմաստափրա-
կան մեկնական ուղղութեամբ պատկանում է,
անտարակցյա, Ամսանիուս-Ոլյուստուրեան մեկ-
նութիւնների խմբին: Խսկ թէ այդ խմբին պատ-
կանող որ մեկնիչի աշխատութիւնն է, այդ խըն-
դիրն այնպէս էլ հեշտ չէ լուծում, ինչպէս կար-
ծում էի վերոյիշեալ հետազոտութեանս մէջ:

Նման հատուածներ կան վերլուծականքի
մէկնութեան մէջ դրամ թի, Ամմոնիսի, Ոլիմպիո-
գորսի ու Էլիասի հետ։ Այդ նման հատուած-
ները՝ որ նեղքեւ առաջ ենք բերում, ապացու-
ցանում են միայն վերլուծականքի մեկնութեան
Ամմոնիսու-Ոլիմպիոգորեան խմբից լինելը, իսկ
թէ արդեօք այդ հատուածների անմիջական աշ-
բիւր ստորեւ յիշուած մեկնիչների երկելն են
թէ նոյն խմբին պատկանող այլ մեկնութեաներ
այդ հարցն, ինչպէս վերեւ բացատրեցինք
մնում է անորոշ։

Ի նկատի առնելով, որ Աւրղուծականիք
մեկնութեան յունարէն բնագիրը կորած է հա-
մարւում, եւ այդ տեսակէտից, նրա հեղինակի
ինդիրն ունի առանձին կարեւորութիւն, նշանա-
կում եմ ներքեւ այդ մեկնութեան բոլոր, իմ
նկատած, նմանութիւններն Ամմանիսո-Ալիմակիո-
գորեան Խմբի միւս մեկնիչների հետ:

Uvulū. p. 458., t. 558. Ammonii in Anal., p. 2.¹

"Φαγε οι Γάνηρ απόν τεθέει
Επειδή συλλογισμῶν οι μὲν

¹ ՏԵՇ. «Դաստիք» Ազգագլութեա Խնդիրը, էջ 10—11:

ման, ապացուցական տրա-
մարանական, իմաստական
էն”:

Մեկն. ի Անրլ., էջ 563.

“Բայց Աերուժականք
մակագրեցան եւ ոչ շարա-
դրականք, վասն երկուց
պատճառաց նախ եւ առա-
ջին, վասն զի սակաւագոյն
է վերլուծութիւն քան
զարագրութիւն զի որ
վերլուծանեն կարող գոյ,
նա եւ շարագրել բայց ոչ
որ շարագրելն գիտէ նա եւ
վերլուծանեն”:

Մեկն. ի Անրլ., էջ 586.

“Սակա սորին այսորիկ
տարաձայնեցան առ միմանս
Մաքսիմոսուռահայեցի աշա.
կերտ Ամիկրոսի եւ Թափմա-
տոս. քանզի եւ Թափմատոս
ուշ ունելով բաժանման
հաւաքմանցն՝ զոման. ա-
ւարտունս կոչեր. որք յա-
ռաջնումն ձեւում, իսկ զո-
մանս անաւանդ որք յերկ-
րորդումն եւ յերրորդումն
իսկ Մաքսիմոս ուշ ունե-
լով սահմանումն ունողումն
զանկարօտն զամենայն բաղ-
հաւաքումն աւարտուն կո-
չեր. Եւ յաղագո այսորիկ
սորին դատաւոր զՈւլիանոս
թագաւոր՝ որ զաղթու-
թիւնն իւր Մաքսիմո-
սումն”:

Մեկն. ի Անրլ., էջ 564.

“Ամենայն իրում պի-
տոյանայ արուեստ ինչ, եւ
կամ մակացութիւն, եթէ
ոչ է այլոյ արուեստի մա-
սին, եւ կամ մասնիկ նորին.
իսկ պիտացելոց մասն է,
կամ մասնիկ, քանզի տա-
ծականու մասնականանայ
բժշկականութիւն. որ ոչ
է այլոյ արհեստի մասն
կամ մասնիկ. Հարկ է նորին
բժշկականութեան մասն
գոյ եւ կամ մասնիկ, եւն
մինչեւ, էջ 563, ու. 14:

¹ Olympiodori Prolegomena et in Categorias commentarium, ed. A. Busse, Berol. 1902. Commentaria in Aristotelem graecas, vol. XII, pars I.

² Հմանէ նաև Ammonii in Anal., էջ 8, 15 - 11, 21.

γάρ είσιν ἀποδεικτικοί, οἱ
δὲ διαλεκτικοί, οἱ δὲ σοφισ-
τικοί.

Ammonii in Anal., p. 6.

Τέ δήποτε οὐ Συνθετικὰ
ἐπέγραψεν οὐδὲ Εὐρετικὰ
ἀλλὰ Ἀραλυτικά, τίς η
ἀποκλήρωσις; καὶ λέγομεν
ὅτι ἀπό τοῦ ἐπιστημονικω-
τέρουν καὶ τοῦ τιμωτέρουν
οὐ γάρ εἰδὼς ἐπιστημονικῶς
ἀναλῦσαι καὶ συγθεῖναι
οἶδεν, οὐ πάντως δὲ οὐδὼς
συγθεῖναι καὶ ἀναλῦσαι.

Ammonii in An. p. 31.

Τούτῳ ἡ πολούθησεν
Πορφύριος καὶ Ἰάμβλιχος,
ἔτι μέρτοι καὶ δ. Μάξιμος,
<δέ> ἀκροατὴς ἦν Ἱερόν
τοῦ Ἰαμβλίζου ἀκροατοῦ.
Καὶ Θεμίστιος δὲ δ. παραφ-
ραστῆς τῆς ἐναρτίας ἐγένετο
δόξης τῆς καὶ τῷ Ἀρισ-
τοτέλει δοκούσης, τούτοις
οὖν τοῖς δύο, τῷ τε Μαξίμῳ
καὶ τῷ Θεμίστῳ, ἐναρτία
περὶ τούτου δοξάζουσιν καὶ
κατασκενάζουσιν, δις φόντο,
τὸ δοκοῦν αὐτοῖς [καὶ]
διήτησεν αὐτὰ δ. βασιλεὺς
Ιουλιανός, καὶ δέδωκεν τῇ
ψῆφον Μαξίμῳ καὶ Ἰαμ-
βλίζῳ καὶ Πορφυρίῳ καὶ
Βοηθῷ.

Olympiodori Prol., p. 14¹.

Πᾶν, ὃ κέχρηται τις ἡ
τέχνη ἡ ἐπιστήμη, ἐάν μὴ
ἡ ἐτέρας τέχνης ἡ ἐπιστήμης
<ἢ> μέρος ἡ μόριον αὐτῆς
τῆς κεχρημέτης ἡ μέρος
ἡ μοδίον ἔστιν. οἶον ὡς ἐπὶ²
παραδειγμάτων τῆς λατοικῆς
τέχνης μέρος ἔστι τὸ διαι-
τηκόν, καὶ οὐδαμῶς ἐτέ-
ρος τέχνης ἡ ἐπιστήμης
μέρος ἡ μόριον ἔστι τῆς
λατοικῆς ἀρια τέχνης τὸ
διαιτικόν μέρος ἔστι, καὶ
αὕτη μόνη κέχρηται αὐτῷ,
πτλ., p. 18, 1².

Մեկն. ի Անրլ., էջ 568.

“Քանզի ոչ կալաւ պէտո
Պղատոն ապացուցակա-
նումն Արիստոտէլի, այլ
Արիստոտէլ Պղատոնում,
զի առցէ ի նմանէ սերմա-
նիս, ոչ պիտացաւ եւ Հռ-
մերոս յաղազո քերթողա-
կանումն Արիստոտէլի. այլ
Արիստοտէլ Հռմերոսում,
ոչ պիտαցաւ եւ Դեմո-
թէնէս վիճարանութեանց
գիտութիւնի, այլ Հռմա-
նունքնի:

Olymiod, Prol., p. 18.

Օնδէ γὰρ ἀποδεικνὺς
էκεῖνος τῆς Ἀριστοτέλους
ἀποδεικτικῆς μεθόδου ἐδε-
ήθη, ἀλλὰ τούγαντίον Ἀρισ-
τοτέλης τῆς Πλάτωνος ἀπο-
δεῖξεως. οὗτοι γοῦν καὶ
Ομηρος καὶ Δημοσθένης
οὐκ ἐδεήθησαν οὔτε τοῦ
Περὶ ποιητικῆς Ἀριστοτέ-
λους οὔτε τῆς Ἐρμογένους
τέχνης, ἀλλὰ τούγαντίον ἀν-
τοὶ τούτων ἐδεήθησαν.

Մեկն. ի Անրլ., էջ 558.

Էլիաս, Մեկն. Ստոր., էջ 17.

“Եւ պարտէ գիտել եթէ
Հինգ են տեսակը հաւաք-
մանց. ապացուցական, տրա-
մարանական, ձարտասանա-
կան, իմաստական, քերթո-
ղական, որ եւ առասպելա-
խառնումն: Բայց Հինգ են
վասն այսր պատճառի. πρηγ
անուն եւ գիմն (^α) կամ
ամենեւին ծշմարտեն, եւ
լինի ապացուցականն. կամ
ամենեւին ստեն, եւ լինի
քերթողականն. եւ կամ է
ինչ որ ծշմարտեն, եւ է ինչ
որ սուտ: Եւ թէ հաւա-
սարը են միմանց ծշմարտեն
եւ սուտն՝ լինի ձարտասա-
նականն. եւ ձարտասանա-
կանումն մայնοւմ ասին
գոյ կացմունք եւ վէճք եւ
անվէճք, առ ի նոցանէ մի-
այն եղանակէիք: Իսկ եթէ
առաւել է ծշմարտեն քան
զուտն՝ լինի տրամարտանա-
կանն. իսկ եթէ առաւել է
սուտն քան զծշմարտեն
լինի իմաստականն:

“Քանզի հինգ են պե-
մատական ապացոյն, եւ
կամ հանգէտս միմանց
զուտն եւ զծշմարտեն եւ
առնէ զծշմարտասանականն:
Ուստի կացմունք ձարտա-
սանին միայն տեսանին վասն
հանգիտանալ միմանց ծշ-
մարտին եւ ու ինն”:

Մեկն. ի Անրլ., էջ 563.

Elias in Cat., p. 133¹.

Նախ եւ առաջին եթէ
Τεօσαράκοντα γὰρ βι-
քառասուն գրոց գաերոց βλίσιν
ενρεθέντων ἐν πα-
հաւաքմանցն ի հին գրա-

¹ Հմանէ նաև Էլիասին Հայերէն թարգմանու-
թիւր, էջ 40 եւ Ոլիմպիոդորի Prolegom., էջ 24, 14-16.
“φασίν ὅν ενδέθησαν ἐν ταῖς βιβλιοθήκαις μετὰ τὴν τε-
λευτὴν αὐτοῦ τῶν μὲν Ἀραλυτικῶν μ' καὶ β' βιβλία,
τῶν δὲ Κατηγοριῶν β'”...

նոցն չորք միայն այսոքիկ՝ 'Առանտիկօն և ծով տան գիրք ընտրեցան գուլ Արիս-Կադյօսի տէսօրա պօնա տղո՞' Առանտիկօն էռքզնօնու և կա տօն Կադյօսի ն.

Մեկն. ի Վերլ. էջ 559, 1-21. Սահմ. իմաստ., էջ 185, 1-186, 5.

Մեկն. ի Վերլ. էջ 559, 30-35. Սահմ. իմաստ., էջ 214, 29-32.

Մեկն. ի Վերլ. էջ 565, 15-18. Սահմ. իմաստ., էջ 191, 21-28.

Մեկն. ի Վերլ. էջ 584, 1-17. Դաւ. Պորֆ. Վերլ. էջ 259, 3-260, 2.

Երեւան: ՊՐՈՓ. Յ. ՄԱՆՈՒԺԵԱՆ
(Տարումակալի):



ՄԽԻԹԱՐ ԳՈՅԾ

(Տարումակալութիւն և վերջ:)

2. Պատմութիւն: Մխիթար զօշ իր դատաստանագրքին ետեւ զետեղած է Աղուանից կաթողիկոսներու շարքը եւ բաւական լնդարձակ պատմութիւն մը ժամանակակից անցքերու, որոնք գլխաւորաբար տեղի ունեցած են Աղուանքի մէջ: Նա Ստեփան. կաթողիկոսին այսպէս կը գրէ՝ “Գրեալ էաք եւ սակաւ ժամանակագրութիւն լնդ դատաստանի գրոց ի մերն աւրինակ, զօր անպատշաճ վարկաք եւ աստ գրել, զի յատուկ եւ այդ կացցէ գիրք: Սկիզբն արաբաք ի կատարածէ պատմութեանն Աղուանից՝ զշար հայրապետացն, մինչեւ ցայն որ այժմ ունի եւ զայլ զերս, որքան լուաք եւ տեսաք, զի եւ այդ այժմ ի մերս շիշաւ յազգէ, զի թէպէտ ունէաք սովորութիւն գրել զժամանակս իւրաքանչիւր զինի եկեալքն ի միասին յարմարելով՝ առնէին լիով պատմութիւն, բայց զի ծովացեալ թողաք, հասաւ եւ ժամանակաց կարգ, զօր թէպէտ սյժմ կամ ձեզ իցէ եւ զայս եւս գուք եւս գրել փութայք, զօր ինչ յաւուրս ձերոյ հայրապետութեան պատահեաց, զի մերձ էք յամենսեանդ գիտել անթերի, քանզի ձեր է զպատշաճն զամենայն լնուլ իշխանութիւն, թողութիւն արասցես ներելով եւ յանդուգն մերոյդ համարձակութեան եւ յիշատակի եւս արժանի արացես ի սուրբ ձեր յաղաւթս հաստատելով եւ ի յոյսն բարեաց, զօր գանձեալ ունիք ի փառս Քրիստոսի” (Քէշիշեան, Ցուց. Զմմառի թ. 226):

Դարձեալ կը գրէ “Համարեցաք եւ զայս եւս հարկաւոր լինել, զի զշար կարգի հայրա-

պետացն գիցուք զԱղուանից, զի եւ յայնոսիկ յամենսեան, զսոսա որ այժմ ունին յարմարեսցուք, մի, ըստ այդմ գրեցուք պատճառի, երկրորդ զի թէ ոք յօժարեսցի գրել պատմութիւն զինի գրեցելում պատմութեանն Մովսէսի դասիուրանեցոյն, որ զըովանդակ պատմէ ղտանս Աղուանից, գիւրին լիցի յայսմանէ զշար հայրապետացն առնուլ, զի ոչ զամենեցուն անուն ի նորայն գացէ պատմութեան, բայց զայնոցիկ, զորոց գրեաց, զի յայն ժամանակէ մինչեւ ցայժմ ոչ գրեաց եւ թէ պատահի ոք՝ յօժ հարկաւոր է, հմմա. Ալիշան՝ Հայապատում թ. 338:

Որքան Ճշգապատում եւ կարեւոր է Մխիթարի այս պատմութիւնն, այնքան աղաւաղելի է անոր վերջին մասերու կրուստը: թէեւ զօշ այս գրութիւնն իրը յաւելուած դրած է դատաստանագրի, սակայն իր փափագն եղած է տեսնել զայն նաեւ իմր առանձին գիրք կամ պրակ՝ “զի յատուկ եւ այդ կացցէ գիրք”՝ “Ժամանակագրութիւնն, ինորագրով: Ասկէ կարելի է մեկնել թէ ինչու ամեն դատաստանագրի մէջ չէ առնուած եւ դարձեալ թէ ինչ՝ երբեմն առանձին արտագրուած է:

Ժամանակակից պատմութիւնը գրած է գետիկցին իրը ականատես եւ ականջալուր, իսկ նախնթաց դարերու կաթողիկոսներու շարքին համար օգտուած է առաջին դարերու հեղինակութիւններէ, մանաւանդ Մովսէս դասիուրանեցին: Նթէ վերջնոյս եւ Մխիթարայ ցանկը համեմատութեան դնենք, կը տեսնենք որ իրարմէ տարբերութիւն ունին, մանաւանդ ժամանակաշրջաններու հարցին մէջ: Ահա համեմատական տախտակը:

Մովսէս 1:

Մխիթար 2:

Ա. Շուփիչաղիշու	Ա. Շուփինաղիշու
Մատթէոս	Մատթէ
Սահակ	Սահակ
Մովսէս	Կարէն
Պանդ	Պանդ
Ղազար	Ղազար
Գրիգոր	Գրիգորիս
Զաքարիա	Զաքարիա
Դաւիթ	Դաւիթ
Յովհան	Յոհան
Երեմիա	Երեմիա
Աբաս ամս 44	Աբաս ամս իգ.

1 Պատմութիւն Աղուանից աշխարհի (Մովսէսի կաղանկատուացուց) Մովսէս 1860, էջ 274:

2 Հայապատում, թ. էջ 338:

